ՏԵՂԵԿԱՆՔ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 35. Վարչական տույժեր նշանակելը մի քանի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում

~~Մեկ անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին:~~

Անձի կողմից երկու կամ ավելի վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Եթե անձը կատարել է մի քանի վարչական իրավախախտումներ, որոնց վերաբերյալ գործերը միաժամանակ քննվում են նույն մարմնի կողմից, վերջնական տույժը նշանակվում է նվազ խիստ տույժն ավելի խիստ տույժով կլանելու միջոցով: Այդ դեպքում հիմնական տույժին կարող է միացվել կատարված վարչական իրավախախտումներից յուրաքանչյուրի համար սույն օրենսգրքով սահմանված լրացուցիչ տույժերից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի:

Անձի կողմից տուգանային միավորի ձևով վարչական տույժ նախատեսող՝ ճանապարհային երթևեկության կանոնների (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման բնագավառի օրենսդրության) վարչական իրավախախտումներ կատարելու դեպքում լրացուցիչ վարչական տույժը նշանակվում է յուրաքանչյուր իրավախախտման համար առանձին-առանձին: